«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Դաստիարակ՝ Արմինե Բաղդասարյան

Մանկապարտեզ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քարահունջի նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....2

Գլուխ I. Ազգային տոներ, ծեսեր.....3-6

Գլուխ II. Ազգային տոների,ծիսական խաղերի կազմակերպումը

մանկապարտեզում.....7-9

2.1 Պարապմունք.....10-12

Եզրակացություն.....13

Գրականություն.....14

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կյանքը անընդհատ գտնվում է շարժման և զարգացման մեջ և դարի խնդիրն է այդ ընթացքի մեջ պահպանել ազգայինը:

Այսօրվա երեխաները մեծանում են մի ժամանակաշրջանում, որը էականորեն տարբերվում է իրենց ծնողների ապրած ժամանակներից՝ տարբեր արժեքներ, իդեալներ, կանոններ:

1. Հայ հասարակության մեջ նկատվում է անհատի, ընտանիքի, հասարակության և պետության զարգացման արժեհամակարգի դաստիարակության նկատմամբ հասարակական գիտակցության նվազում, որն էլ հանդիսանում է ընտանիքի, հասարակության , պետության և անվտանգության ցածր մակարդակի զարգացման պատճառներից մեկը:

Էական խնդիր է պահպանել ազգայինը, սերնդից սերունդ փոխանցել մնայուն արժեքները:

Ազգային տոներն ու ծեսերը հայ ժողովրդի կյանքում միշտ կարևոր նշանակություն են ունեցել: Դրանք մարդկանց համար կարևոր իրադարձությունների հանդիսավոր նշում է, որոնք կատարվում են շքեղ հանդիսություններով, արարողություններով և միջոցառումներով: Սակայն տոների նպատակը միայն հանդիսություններ կազմակերպելը չէ: Տոներն ու ծեսերը ունեն և ուսուցողական, և դաստիարակչական նշանակություն: Յուրաքանչյուր տոն ունի իր խորհուրդը, իմաստը, պատգամն ու ավանդությունը:

Ազգային արժեքները մարդու մեջ պետք է ձևավորվեն դեռ վաղ մանկութունից, որոնք էլ հանդիսանում են ազգի գոյության, զարգացման և կեցության հիմքը:

Ներկայիս սերնդի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման համար կարևոր է նրա հոգևոր, մշակույթային արժեքների ձևավորումն ու ընկալումը: Եվ այս արժեքների ձևավորման աստիճաններից մեկն էլ մանկապարտեզն է:

Ընտանիքում, մանկապարտեզում է ձևավորվում երեխայի առաջին ընկալումները ազգային տոների և ծեսերի մասին: Դրա համար մեր՝ մանկավարժներիս, առաքելությունն է երեխաների մեջ սերմանել ազգայինը, հոգևորը, դրանք արժեվորելու, պահպանելու և այդ սերը մեծացնելով՝ փոխանցել սերնդեսերունդ:

Մեր երկրում երեխաների մեջ ազգային արժեքների ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական կրթական չափորոշչում, և որպես բովանդակային բաղադրիչ, հաշվի առնելով երեխաների կարողունակությունները՝ պետք է ունենալ համապատասխան վերջնարդյունքներ:

ԳԼՈՒԽ 1

1.1 ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐՆ ՈՒ ԾԵՍԵՐԸ

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերամիավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:

Հայ ազգային տոներն ունեն ծիսական արարողակարգ, որոնցից են Ամանոր, Սուրբ Ծնունդը, Տեառնընդառաջը, Բարեկենդանը, Ծաղկազարդը, Զատիկը, Համբարձումը, Վարդավառը: Այս տոների ու ծեսերի շնորհիվ պահպանվել ու սերընդեսերունդ են փոխանցել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել են էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա:

ԱՄԱՆՈՐԸ նշվում է տարբեր ժողովուրդների կողմից ընդունված օրացույցում ընթացիկ տարվա վերջին օրվա և հաջորդ տարվա առաջին օրվա գիշերը: Ամանորը նշելու սովորույթը գոյություն ուներ դեռևս մ.թ.ա. 3-րդ հազարամյակում Միջագետքում: Ամանորով նշում են տարվա սկիզբը: Տարին ժամանակի սահմանն է, որը վերցրած է բնությունից:

Հունվարի 1-ը որպես տարվա սկիզբ, սահմանվել է Հուլիոս Կեսարի կողմից:Հին Հռոմում այդ օրը նվիրված էր Յանուսին ընտրության, դռների աստծուն:

Հայերն այս տոնը նշում են անհիշելի ժամանկներից սկսած: Մեր հները Նոր տարին անվանել են նաև այլ անուններով՝ Նավասարդ, Տարեմուտ, Տարեգլուխ, Կաղանդ, Լոլե:

Հազարամյակների ընթացքում տոնը նշելու ժամանակը փոփոխվել, հետ ու առաջ է ընկել:

Խոր անցյալում հայոց նախնիները Ամանորը տոնել են մարտի 21-ի գիշերահավասարի օրը: Դա պատահական ընտրություն չէր, հայը նոր տարվա հաջողությունն ու բերքառատ լինելը կապել է գարնան զարթոնքի հետ: Տոմարական փոփոխությունների հետևանքով հայոց Նոր տարին տեղափոխվել է Նավասարդ 1-ը, այսինքն օգոստոսի 11-ը: Նավասարդի տոնահանդեսները տևել

են մի քանի օր, որոնց ընթացքում կատարվում են զոհաբերություններ, կազմակերպվում խրախճանքներ երգ ու պարի ուղեկցությամբ, թատերախաղեր:
Հայերը հունվարի 1-ը Նոր տարվա սկզբի տոն են ընդունել վերջին հարյուրամյակին: Աշխարհի բազմաթիվ ժողովրդների նման հայերի մեջ նույնպես Նոր տարվա տոնակատարությունը խորհրդանշում է, անցած տարվա հաջողությունների և առատության ծիսական ապահովումը և չարիքի կանխարգելումը:
Սուրբ Ծնունդ - Մարդու կյանքում ամենաուրախ օրերից մեկն իր ծննդյան օրն է: Նույն ձևով մեզ և մեր եկեղեցու ամենաուրախ տոնը Հիսուս Քրիստոսի ծննդյան օրն է: Այդ օրը եկեղեցիներում տեղի են ունենում բազմամարդ, հանդիսավոր արարողություններ:
Մինչև V դարը քրիստոնեական բոլոր եղեցիները Հիսուսի Ծննդյան և Մկրտության տոնը նշում էին հունվարի 6-ին: Հետագայում որոշ եկեղեցիներ Սուրբ Ծնունդը սկսեցին նշել դեկտեմբերի 25-ին:
Մենք հավատարիմ ենք մնացել հին կարգին և Սուրբ Ծնունդը ամեն տարի նշում ենք հունվարի 6-ին:
Սուրբ Ծննդյան տոնի նախորդ օրը երեկոյան՝ հունվարի 5-ին, տեսնում ենք մարդկանց, ովքեր վառվող մոմը կամ ճրագը ձեռքներին դուրս են գալիս եկեղեցուց և գնում իրենց տուն: Եկեղեցում պատարագ է մատուցվում, որը կոչվում է Ճրագալույսի պատարագ:
Հունվարի 6-ի առավոտյան բոլորն իրար ավետում են՝ «Քրիստոս ծնվեց և հայտնվեց», որի պատասխանն է՝ «Ձեզ և մեզ մեծ ավետիս»:

Տյառն ընդառաջ – Սուրբ Ծննդյան տոներից հետո անհամբերությամբ սպասում ենք ուրախ հանդիսություններով փետրվարի 14 – ին: Նախորդ օրը երեկոյան սկսվում և հաջորդ օրն ավարտվում է Տյառնընդառաջի տոնը, որը ժողովրդի մեջ հայտնի է նաև Տրնդեզ անունով:
Տյառնընդառաջ նշանակում է Տիրոջն ընդառաջ: Տոնը նվիրված է քառասունօրյա Հիսուսին տաճար բերելուն:
Տոնի արարողությունները սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությամբ: Տոնակատարությունները շարունակվում են տների բակերում, որտեղ եկեղեցեուց բերված կրակով խարույկներ են վառում: Դրանք ասես ցրում են ձմռան ցուրտն ու մթությունը և ավետքում գարնան գալուստը:
Տյառնընդառաջը հաստատվել է իբրև նորապսակների և նորակազմ ընտանիքների օրհնության օր:
Բարեկենդան – Մեզանից շատերը կարդացել են Հովհաննես Թումանյանի «Բարեկենդանը» հեքաթը և հիշում ենք, թե ինչպես է տանտիրուհին յուղն ու բը-

րինձը տալիս տան մոտով անցնող մի պատահական ճամփորդի:
Այդ ինչ յուղ ու բրինձ էր, և ինչու էր տանտերն այն բերել՝ ասելով, թե Բարեկենդանի համար է: Տանտիրուհին չէր խաբվի և նման տխուր ու ծիծաղելի վիճակի մեջ ընկնի, եթե իմանար Բարեկենդանի մասին:
Բարեկենդան բառը կազմված է «բարի» ու «կենդանություն» բառերից և նշանակում է ուրախություն:
Բարեկենդանին մարդիկ հյուր են գնում կամ ամբողջ ընտանիքով հավաքվում տոնական սեղանների մոտ և ուրախանում: Այս տոնի գլխավոր ուտելիքը յուղով փլավն է: Բոլորը մեծ տոների նախորդող կիրակին կոչվում է Բարեկենդան:
Ծաղկազարդը ժաղովրդական ամենասիրված տոներից է: Տոնից առաջ երեկոյան երիտասարդները ուռենու ճյուղեր են կտրում և բերում եկեղեցի: Օրհնված ճյուղերը մարդիկ պահում են տանը, դնում ամբարների կամ կարասների մեջ, որպեսզի հիվանդությունները վերանան և տարին առատ լինի բերք ու բարիքով: Հին աշխարհում ընդունված էր թագավորների ճանապարհը զարդարել գորգերով, ծաղիկներով: Այս ձևով մարդիկ արտահայտում էին իրենց սերն ու հավատը Քրիստոսի նկատմամբ: Իսկ խաչվելուց առաջ Հիսուս Քրիստոսին, վերջին անգամ Երուսաղեմ մտնելուց, ժողովուրդը դիմավորեց մեծ ուրախությամբ՝ նրա առջեվ ծառերի ճյուղեր և նույնիսկ իրենց զգեստները փռելով:
Ծաղկազարդը շարժական տոն է, նշվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ ընկած կիրակի օրը:
Զատկի կամ Սուրբ Հարության տոնը նշում են մեծ հանդիսավորությամբ: Տոնին նախորդող շաբաթ երեկոյան եկեղոցում կատարվում է ճրագալույսի պատարագ: Մարդիկ հանդիպելով իրար՝ միմյանց են փոխանցում Հարության ավետիսը՝ ասելով՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց», պատասխանը՝« Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:
Բոլոր ընտանիքներում սոնական սեղան է բացվում: Սեղանի զարդը Զատիկի կարմիր Ձուն է: Մարդիկ միմյանց տոնի առթիվ կարմիր ներկած ձու են նվիրում:
Զատկի ձուն կարմիր ներկելը խորհրդանշում է խաչի վրա մարդկանց մեղքերի թողության կամար Հիսուսի թափած արյունը: Սուրբ հարության տոնին առաջներում մատաղ էին անում: Մատաղը բաժանվում էր աղքատներին ու կարիքավորներին:

Համբարձման տոնը նշվում է Զատիկին հաջորդող քառասուներորդ օրը: Երկրից երկինք Հիսուսի փոխադրվելը անվանվում է Համբարձում:

Համբարձման տոնին նախարդող գիշերը ժողովուրդն անվանում Համբարձման գիշեր:
Այդ օրն աղջիկները ծաղիկներ էին հավաքում և յոթ աղբյուրից ջուր լցնում մի ամանի մեջ: Հավաքված ծաղիկներով փունջ էին կապում և նրանով ծածկում սափորի բերանը: Գիշերը սափորը դնում էին դրսում, բաց երկնքի ներքո, որ այն ծածկվի Համբարձման գիշերվա ցողով:
Համբարձումն եկավ, ծաղկունքը ալվան:
Զուգվել են հանդեր նախշուն գույներով:
Փունջ – փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխույժ երգերով:

/Հ.Թումանյանի «Անուշ» պոեմից/

Վարդավառը կամ **Պայծառատեսության** տոնը նշանակում է պայծառ կերպարանք, պայծառ տեսք ունենալ: Տոնին մեծ ու փոքր, տղամարդ ու կին կժերով, սափորներով և դույլերով իրար վրա ջուր են լցնում: Ասում են, որ ջրային այս խաղերը սկսվել են դեռ ջրհեղեղի ժամանակներից: Հնում այս տոնին ծաղիկնե էին հավաքում, փնջեր կազմում և միմյանց նվիրում:
Ամենից պայծառ, հոտավետ ու գեղեցիկ ծաղիկը վարդն է:Այն համարվում է ծաղիկների թագուհին, և ի պատիվ վարդի, տոնը անվանել են Վարդավառ:
Վարդավառը տոնում են հունիսի 28- ից օգոստոսի 1-ը ընկած ժամանակակա-հատվածում:

ԳԼՈՒԽ II

ԱԶԳԱՅԻՆ ՏՈՆԵՐԻ, ԾԻՍԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել հստակ կողմնորոշում կյանքի նկատմամբ, նրանց մոտ դաստիարակել հարգանք ընտանիքի, հայրենիքի անցյալի ու ներկայի, սրտացավություն՝ ապագայի նկատմամբ: Նախադպրոցական տարիքի՝ որպես անձի անհատականություն ձևավորման ժամանակաշրջանի, արդյունավետությունն եզակի է: Եվ հարցը միայն նրանում չէ, որ հենց այս տարիքում է հնարավոր առավել ապդյունավետ զարգացնել անհատի կարողությունները, այլ նրանում, որ առավել մեծ կամ ուշ տարիքում այդ կարողությունները նվազում են և այն ինչ չի իրականացվել նախադպրոցական տարիքում, դպրոցական տարիքում դժվարությամբ է իրականացվում և նույն արդյունավետությունը չի ունենում: Նախադպրոցական տարիքը երեխայի զարգացման ամենազգայուն ժամանակաշրջանն է և բնութագրվում է իր ուրույն տարիքային առանձնահատկություններով՝ հնազանդությամբ, կանխատեսելիության, դյուրահավատությամբ, ընդօրինակելու հակումով, մեծահասակների՝ երեխաների վրա ունեցած մեծ ազդեցությամբ և այլն: Սերը ազգայինի նկատմամբ պետք է սկսել երեխային շրջապատող աշխարհից՝ ընտանիքից: Ընտանեկան տոների, ավանդույթների հանդեպ հարգանքը դաստիարակության առաջին քայլն է: Դաստիարակների առաջնային նպատակներից մեկը սաների մոտ հնարավորինը շատ սեր և հարգանք արթացներ իրենց ընտանիքի, հայրենիքի, մանկապարտեզի, ազգային տոների և ծեսերի նկատմամբ:

Դաստիարակի նպատակներից է նաև.

. Ձևավորել գիտելիքներ սաների ազգային պատկանելիության վերաբերյալ, ձևավորել ազգային մտածելակերպ:

. Ծանոթացնել ազգային երգ ու պարին, խաղերին, ազգային ծիսակատարություններին և խոհանոցին:

Այս նպատակին հասցնելու համար մենք՝ դաստիարակներս, կազմակերպում ենք.

1. Ազգային տոներին, ծիսակատարություններին նվիրված միջցառումներ՝ պահպանելով տոնի բուն խորհուրդն ու արարողակարգը:
2. Համապատասխան հեռուստահաղորդումներից, հայկական գեղարվեստական ֆիլմերից, մուլտֆիլմերից հատվածների դիտումների կազմակերպում:
3. Թեմատիկ զրույցների կազմակերպում:
4. Գեղարվեստական գրականության, բանահյուսության տարբեր ժանրերի ընթեր-

ցում:
5.Էքսկուրսիաների, այցելությունների,կազմակերպում ազգային մշակույթի կենտրոններ, թանգարաններ, եկեղեցիներ:
6. Ուսուցողական –ճանաչողական խաղերի, ազգային ծիսական խաղերի կազմակերպում: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է: Ազգային, ծիսական մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական, հոգեկան, մտավոր հնարավորությունների զարգացմանը: Խաղը հնարավորություն է տալիս երեխաներին իրենց համար առավել հասանելի եղանակով և բարոյական արժեքներով ճանաչել կյանքը, հասարակական երևույթները և այլն:
Ազգային թեմաներով դիդակտիկ խաղերը հարուստ պաշար են և հնարավորություն են տալիս երեխաներին զբաղվել տարատեսակ գործունեությամբ՝ մտավոր, շարժողական , հուզական և այլն: Նրանց մղում են ինքնուրույն գործունեության, նրանց մոտ առաջանում են մտածելու, ապրումակցելու, խաղի խնդրի լուծման համար ինքնուրույն ակտիվ լուծումներ որոնելու, խաղի պայմաններին և հանգամանքներին ենթարկվելու, ընկերների հետ փոխհարաբերվելու կարողություններ:
Երեխաների հարաբերությունները խաղի ընթացքում և խաղի նկատմամբ նպաստում են նրանց սոցիալականացմանը:
Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր ու խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության տարբեր ձևերը: Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներից են
. իրավիճակների խաղարկում
. դերախաղ
. խմբային աշխատանք
Ծիսական խաղերի նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններով ու հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը: Կենդանի ազատ միջավայրում, առանց սցենարով գրված, անգիր արած տեքստի, խաղարկում են ծիսական գործողություններ՝ երգելով, պարելով, խաղալով, ինքնադրսևորվելով, տեղում իրենց ստեղծած ազատ տեքստով ներկայացնելով, իրացնելով իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Ազգային ծիսական, մանկական խաղերը միշտ երեխաների համար մնում են սիրելի: Այդ խաղերից են՝ «Կարմիր կոճակը», «Վերմակ, ներքնակ», «Ծիտը քարին», «Ձվախաղ», «Մուկն ու կատուն» և այլն: Այս խաղերի իրականացվում է մանկապարտեզներում և դառնում են երեխաների ներդաշնակ զարգացման ուղենիշը:

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Մեթոդիկան - « Ինձ շրջապատող աշխարհը»,

Թեման - «Տրնդեզ»

Տեսակը - Ինտեգրված երաժշտության հետ

Նպատակը - . Խթանել ընտանեկան ավանդույթների, ազգային տոների և ծեսերի, դրանց առանձնահատկությունների մասին պատկերացումները:
. Ընդլայնել գիտելիքները «Տրնդեզ» տոնի և դրա նշանակության, խորհրդի մասին:
.Դաստիարակել համակողմանի զարգացած անհատներ, իրենց ազգությամբ հը-պարտ և ազգասեր քաղաքացիներ:

Ակնկալվող վերջնարդյունքներ

.Կիմանան մեր ազգային տոներն ու ծեսերը, դրանց կարևորությունը մեր առօրյայում և կենցաղում:
.Կկարողանան տարբերել «Տրնդեզ»-ին կատարվող ծիսական արարողակարգը մյուս տոների արարողակարգերից:

Կապը չափորոշչի հետ – Ի (ե) , Շ (ա) , ԽՀ (գ), (ը)

Անհրաժեշտ պարագաներ - Զամբյուղով քաղցրավենիք, աղանձ, ցորենի հասկեր, տարազ, փայտ՝ կրակ վառելու համար:

Խթանում- Ազգայինն տոների մասին պատմող տեսանյութի դիտում:

Իմաստի ընկալում- Դիտումից հետո վերհիշել ազգային տոները և առանձնացնել «Տրնդեզ»- ը: Կարդալ պատմություն տոնի մասին:

« ԲԱՑ» հարցեր

. Ի՞նչ տոնի մասին է պատմությունը:

. Ու՞մ է նվիրված տոնը:

. Ո՞ր օրն են նշում տոնը:

. Որտեղի՞ց են տանում կրակը խարույկ վառելու համար:

. Ի՞նչ էին անում կրակի մոխիրը մարդիկ տոնից հետո:

Կրկնել մի քանի անգամ «Քո կարմրությունը ինձ լինի, իմ դեղնությունը քեզ» արտահայտությունը, որպեսզի այն կրկնեն խարույկի վրայով թռչելու ժամանակ:

Կշռադատում - Բակում շուրջպար բռնել հրակի շուրջ և ցատկել:

Երգ –երաժշտություն << Լե լե լե>>

Խմբասենյակում համտեսել տոնական քաղցրավենիքները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ երեխային հայեցի կրթությունը և դաստիարակությունն այնքան են անհրաժեշտ, որքան մեսրոպյան այբուբենը՝ հայոց լեզուն իմանալու համար: Ես այս թեման ընտրել եմ հենց այս գաղափարախոսությամբ, որ ազգային դաստիարակությունը կարող է երեխայի կարողունակությունների զարգացման ընթացքի և առաջադիմության մակարդակի հիմք հանդիսանա և ունենա ակընկալվող վերջնարդյունք: Ազգային սովորությունները հիմք են դառնում նաև երեխայի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի և այդ ոլորտում տարրական պատկերացումների ձևավորման համար:

Փորձը ցույց է տալիս, որ երեխայի գեղագիտական և քրիստոնեական դաստիարակության իմաստով անգնահատելի նշանակություն ունեն ծիսական, ընտանեկան, ժողովրդական ազգային հանդիսությունների մանկականացված միջոցառումները: Դրանք սրտամոտ են երեխային, մեծ սիրով և ոգևորությամբ մասնակցում են հանդիսություններին:

Իմ կարծիքով երեխայի մեջ մանկապարտեզում է սերմանվում մարդուն այսօր այնքան անհրաժեշտ բարության առաջին հատիկները:

Մենք՝ հայերս մեր չմարվող հիշողությունն արյան միջոցով փոխանցել ենք սենդեսերունդ: Մենք մեր հիշողության, մեր պատմության տերն ենք ու ժառանգորդը՝ Հայկ Նահապետից մինչև հավերժություն: Ուստի պետք է ուժ առնենք մեր ազգային մեծագույն մանկավարժներից և նրանցից վերցնենք այն լավագույնը՝ ազգային մտածողության մանկավարժական շարժառիթներն ու ուղենիշները, որոնք այսօր էլ արդիական են:

Երեխան բաց աչքերով նայում է հրաշք աշխարհին, և թե ինչ կլսի ու կտեսնի՝ մեզանից է կախված: Երեխայի բաց հոգու աչքերի մեջ ամենազորեղը առաջին տպավորությունն է և դա հետագայում սնում է նրա սիրտն ու հոգին, թևավորում նրա երևակայությունը , ուրեմն նախ և առաջ նրան պետք է մատուցել ամենալավը և փորձվածը՝ ամենալավ երգերն ու պարերը, ամենալավ խաղերն ու գույները, այսինքն նյութի թե ընտրության և թե մատուցման ձևը պետք է լինի հնարավորին չափ միակը, լավագույնը:

Մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք ըստ արժանվույն կատարել մեզ վստահված գործը, այսինքն՝ հայ մանուկներին դաստիարակել հայեցի ու քրիստոնեաբար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայկ Խաչատրյան «Հանրագիտական օրացույց» 1990թ.

Լ.Սմբատյան «Տոնական ղողանջներ» Երևան 2011թ.

Հ. Խառատյան «Հայ ժողովրդական տոները»

Ռիմա Ռստկյան «Հայկական ծեսերը»

Վարդաան Դանիելյան, Առաքել Գյուլբուդաղյան ,Արամ Նազարյան «Հայոց եկեղեցու պատմություն » 6-րդ դասարան, 2019թ.

Ռ.Ծառուկյան,Հ.Միտոյան,Լ.Սմբատյան,Ն,Նիկողոսյան « Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը » Դաստիարակի ուղեցույց 2011թ.

https://marinemkrtchyan.files.wordpress.com